

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԿԱՐՏԸՆ ԹԱՌԻԸՐ

ՆՈՅՆԵՄԲԵՐ 3, 1997

Որպես հասարակական գործիչներ, մտազբաղ առօրեայ հրատապ գործնական հարցերով, հազուադեպ առիթներով կանգ կ'առնենք քննարկելու համար մեր գործունեության հիմնական նպատակները եւ անոնց իրագործումի միջոցներուն յարմարաւետութիւնը: Երբեմն, միջոցները կը վերածուին նպատակներու ստեղծելով կազմալուծումի առաջնորդող անտարբերութիւն:

Իմաստի փնտռտուքը մարդկային հիմնական պահանջներէն մէկն է: Իմաստը կարելի է գտնել կոյր հաւատքով կամ չոր տրամաբանութեամբ եւ մաւր երկուքին միաձուլումով: Որպէս ապրող բայց սահմանափակ կարողութիւններով օժտուած էակներ, եթէ մեր հարցադրումները տրամաբանական պատասխաններ չգտնեն կը գոհանանք հաւատքի նուազագոյն ապահովութեամբ որ կը մնայ մախապայման սակայն՝ ոչ բաւարար խթան պատճառարկութեան:

Ազգային կեանքի բեմերէն կը լսենք կրկնուող մախադասութիւններ որոնք կ'ընկալուին որպէս անվիճելի ճշմարտութիւններ: Պահպանենք մեր ինքնութիւնը, պահպանենք մեր արժէքները: Այս երկու մախադասութիւնները ունին հասարակաց պահպանենք բառը, որ միցոջ մըն է հասնելու նպատակի մը: Սակայն՝ ի՞նչպէս կարելի է սահմանել մեր ազգային ինքնութիւնը: Որո՞նք են մեր ազգային արժէքները: Արդէօք գոյութիւն ու՞նի Հայկական Paradigm, ազգային արժեհամակարգ մը: Պատմական, մշակութային եւ բարոյական ազգային արժէքները, որքա՞նով մնայուն են եւ վերջնական, մանաւանդ՝ Սփիւռքի այլազան քաղաքակրթութիւններու ճնշիչ ազդեցութիւնը նկատի առնելով: Ուրեմն էական է որ հաւաքական ինքնաճանաչումէ մը ետք յստակացնենք մեր նպատակները, իրապաշտ եւ գործնապաշտ մօտեցումով բացայայտենք մեր հաւաքական կարելիութիւնները, եւ վերաքննենք մեր աշխատամիջոցներու յարմարաւետութիւնը:

ա-Ազգային նպատակներուն անորոշութիւնը.

1915-ի ողբերգութեան յաջորդող առաջին տասնամեակները եղան ժամանակաւոր գաղթականութեան եւ անմիջական գոյութեանական հարցերու լուծման տարիներ: 1965-էն ետք, Մեծ Երազի իրականացման միակ միջոցը նկատուեցաւ ազատագրական պայքարի ահաբեկչական գործողութիւնները որոնք ունեցան իրենց կարեւոր ազդեցութիւնը ներքին եւ արտաքին ճակատներու վրայ:

Այժմ, կայ Հայաստանի Հանրապետությունը: Կայ Արցախի քաղաքական ազատագրության շարունակուող մարտահրաւերը: Անլոյժ կը մնան տակաւին Մեծ Երազին ճամբուն վրայ գտնուող անհամար քաղաքական հանգոյցներ եւ Հայկական Դատը կարիքը ունի Սփիւռքի եւ Հայրենիքի բոլոր ուժերուն լարուած եւ ամբողջական պահանջատիրութեան:

Սակայն՝ այս բոլորին կողքին, Սփիւռքահայը իր առօրեայ մտահոգութիւններէն անդին, յստակ պատկերացում մը չունի իր հաւաքական ապագային մասին: Մարդկային պահանջներէն մէկն է ունենալ յստակ բայց ոչ սառած նպատակներ եւ հաւատալ յուսալից ապագայի մը: Հաւաքական ինքնութիւնը կը կազմաւորուի հասարակաց արժեհամակարգի մը առանցքին շուրջ որ ուղղութիւն կու տայ մարդկային կեանքի վախճանականութեան (finality) եւ կը լուսաւորէ անոր իմաստը: «Ո՞ր կ'երթանք» հարցումը նախ պէտք է բաւարարուի վստահութեան զգացումով դէպի մեր ազգային առաջնորդները ու անոնց որդեգրած ուղին եւ ապա այն համոզումով որ անոնք ունին կարողութիւնն ու միջոցները իրագործելու մեր էական նպատակները:

Սփիւռքի ազգային հեռակայ նպատակը կրնայ վերածուիլ խթանիչ ուժի եթէ Սփիւռքի ազգային կառոյցներն ու Հայրենի Պետութիւնը կը կարողանան համագործակցութեամբ օգտագործել մեր ազգային ամբողջական կարողութիւնները ի նպաստ Հայրենիքի հզօրացման եւ Սփիւռքի գոյատեւման որպէս զուգահէր ապահովութիւն եւ կենդանի ուժ:

բ- Սփիւռքի մէջ, մեր ինքնութեան աղաւաղումն ու տազնապը

Ինքնութիւն մը կը սահմանուի նիւթական, ընկերային եւ տնտեսական առարկայական չափանիշերով եւ զանազան զգացումներու ամբողջութեամբ մը.

Միութեան զգացումը

որպէս գոյութենական ապահովութիւն

որպէս հաւատարմութիւն

որպէս ճակատագիր

Պատկանելիութեան զգացումը

որպէս հպարտութիւն

որպէս գոհունակութիւն

որպէս նիւթական շահ

որպէս այլասիրութիւն

Տարբերութեան զգացումը- գերակայութիւն կամ ստորակայութիւն

որպէս պատմութիւն

*որպես մշակույթ
որպես վարք ու բարք
որպես արժէք*

Յարակցութեան զգացումը

*ապրելով նոյն աշխարհագրական միջավայրի մէջ
աշխատելով նոյն տնտեսական դրութեան մէջ
բաժնելով նոյն յաղթանակներու հարբեցումը
բաժնելով նոյն ողբերգութիւններու ընկճումը*

Արժէքներու զգացումը

*կրօնական
բարոյական
մշակութային*

Ինքնավարութեան զգացումը

*ազատութեան
անկախութեան*

Կազմակերպուած վստահութեան զգացումը լինելիութեան իրայատուկ կամքի մը շուրջ

*որպէս պատմական աշխարհահայեացք
որպէս ներկայ կեանքի մակարդակ եւ որակ
որպէս ապագայի բարօրութեան եւ յաջողութեան տեսիլք*

Հաւաքականութեան մը ինքնութեան կամարը կը հենի երկու սիւներու վրան.

ա- Անցեալը իր

Առասպելներով

*հիմնադրութեան
յաղթանակներու
պարտութիւններու*

Դիւցազներգութեամբ

*որպէս բարիի ու չարի կերպար
որպէս հաւագական երագ*

Իրայատուկ աշխարհահայեացքով

*իր մտածելակերպով
իր դիրքորոշումներով
իր հոգեբանութեամբ*

Պատմութեամբը

*ողբերգութիւններուն
նուաճումներուն
հերոսներուն
հանգուցային հանգրուաններուն*

Աւանդութիւններով

*որպէս կրօնական հաւատք ու ծէս
որպէս սովորութիւն
որպէս նկարագիր եւ բնատրութիւն
որպէս բարոյթներ
որպէս օրէնք*

Մշակոյթով

*որպէս իրագործելի տեսլական
որպէս շայտարարուած գաղափառախօսութիւն
որպէս կեանքի իմաստի չափանիշ
որպէս արուեստի արտայայտութիւն
որպէս պատմական յիշողութիւն
որպէս արժէհամակարգ
որպէս կրթութիւն*

բ- Ներկան իր

Ֆիզիքական կազմակերպութեամբ

*որպէս աշխարհագրական դիրք եւ տարածք
որպէս փոյս յարաբերութեան միջոցներ*

Կարողականութեամբ

*տնտեսական
եղեմտական
մտատրական*

Անցեալի յիշողութեամբ

*որպէս պատմական նշխարք
որպէս աւանդական յիշատակութիւն
որպէս հաւաքական դիրքորոշումներ
որպէս պատմութեան ազդեցութիւնը ներկայի ընկերային
կազմակերպութեան*

Տնտեսական, ընկերային եւ մշակութային կառոյցներով
տնտեսական զարգացումի որակ ու մակարդակ
հաւաքական կառոյցներու մակարդակ
նորարարական աշխատանքի կարողականութիւն
ստեղծագործական աշխատանքի կարողութիւն
ընկերային կեանքի չափանիշներ
գործածական լեզուի ճկունութիւնը եւ հարստութիւնը

Ընկերային կազմակերպութեամբ

որպէս հաւաքական մտածելակերպ
որպէս հաւաքական փոխ-յարաբերութիւն շրջապատին հետ
որպէս վարք ու բարք
որպէս ծէս
որպէս գոհունակութիւն
որպէս հիասթափութիւն
որպէս նպատակսլաց գործունէութիւն

Փոփոխութեան ընդունակութեամբ

իր կարողականութեամբ
իր պատճառարկութեամբ
իր ռազմաւարութեամբ
իր պատշաճեցումով

Առաջին սիւնը կը մնայ հաստատուն, որպէս հիմ ունենալով դարերու պատմութեան կտակը: Չերժ ըլլալով կիռքերու գրոհներէն, վերածուած են ազգային հաւատանքի եւ որպէս շողկապող մասունք ներշնչումի աղբիւր են բոլորին:

Ինքնութիւն մը քարացած բան մը չէ ու կը յեղաշրջուի նոր թափանցումներու մասնակի գտումով: Ինքնութիւն մը կը գոյատեւէ եթէ անխուսաբելի փոփոխութիւններուն կարենայ ապահովել շարունակականութեան հաստատ հիմ մը: Հասուն ինքնութիւն մը կազմող բոլոր զգացումները հաւասար չափով զարգացած կ'ըլլան: Այդ զգացումներուն հաւասարակշռուած զարգացումն է որ թոյլ կու տայ իմաստաւորել ներկայի իրադրութիւնը, անցեալի փորձառութիւններու օգտագործումը, ինքնավստահ հանդուրժողութիւնն ու յուսախափութիւններու կտաւարումը, պատասխանատուութեան զգացումը, համերաշխութեան զգացումը, տալու եւ առնելու կարողութիւնը, ապակեղրոնացումի կարողութիւնը եւ ներքին փոփոխութիւններ կռելու կարողութիւնը:

Երկրորդ սիմը դրուած է շարժուն աւազի վրայ, վտանգուած գոյութեանական յարափոփոխ դրդրացումներէն, ընկերային վերիվայրումներէն, մշակութային աղաւաղումներէն եւ նպատակներու անորոշութենէն: Երկրորդ սիմը կը մնայ անկայուն հաւասարակշռութեան մէջ, վտանգելով զայն կամրջով կամարը առաջին սիմին հետ՝ անցեալի անուրջին հետ:

Երկրորդ սիմը կ'ամրանայ երբ հետեւողական աշխատանքով կը փորձենք ղեկավարել մեր հաւաքական ճակատագիրը, ներմուծելով նոր խթաններ եւ պատճառարկումներ որպէսզի Հայ ըլլալը ունենայ գոյութեանական առաւելութիւններ: Հայ ըլլալու հպարտութիւնը հաստատուի զգացականէն անդին գործնական կեանքի առնելու եւ տալու գաղափարին վրայ: Այսօրուան առողները, բառին ամենալայն իմաստով, վերածուին վաղուան կամարու ու հաւատարմ տուողներուն, որպէս անվերջ շղթայ ազգային իրարօգնութեան եւ համագործակցութեան: Հայ ըլլալը, Հայերէն լեզուն գիտնալը կրնան ըլլալ անհրաժեշտութիւն այն պարագային երբ մեր ազգային պատկանելիութիւնը կը վերածուի ներգործական եւ նպատակասլաց աշխատանքի իր անմիջական եւ համոզիչ գործնական ու զգացական արդիւնքներով:

Ճարտարապետ՝ Մկրտիչ Լ. Պուլտուքեան

[HOME](#)